ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 343-Ա

1988-1997 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Այլընտրանքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1250-Ն որոշման 7-րդ կետի դրույթների՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա.Գևորգյանին՝ 2015 թվականի դեկտեմբեր-2016 թվականի հունվար ամիսներին անցկացնել Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Ստեղծել զորակոչային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա.Գևորգյան նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ,

2) Ս.Մարտիրոսյան անդամ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ,

3) Գ.Հայրապետյան անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

4) Վ.Սարգսյան անդամ, ավագ բժիշկ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության թերապևտ:

3. Հաստատել զորակոչիկների բժշկական քննություն անցկացնելու հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Վ.Սարգսյան թերապևտ, ավագ բժիշկ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

2) Ռ.Մկրտչյան վիրաբույժ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

3) Լ.Ավետիսյան ակնաբույժ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

4) Ա.Խալաթյան քիթ-կոկորդ-ականջ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

5) Հ.Կարապետյան նյարդաբան <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

6) Ք.Արեստակյան սրտաբան <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

7) Ա.Մանուկյան հոգեբույժ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

8) Ա.Կառավարիչյան մաշկավեներաբան <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,

9) Ս.Օհանջանյան բուժքույր <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն:

4. Զորակոչիկների և զինծառայողների ընտանեկան և նյութական պայմանների ստուգման և քննման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա.Կոդաբաշյան նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ, մայոր,

2) Գ.Հայրապետյան անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

3) Համայնքի ղեկավար ըստ բնակավայրի:

5. Բժշկական քննություններ անցկացնող հանձնաժողովի անդամների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման պահանջների համաձայն:

6. Մարզի բժշկական կենտրոններում զորակոչային տարիքի անձանց բժշկական քննություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն:

7. <<Նաիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Նազարյանին՝

1) Ժամանակին կազմակերպել այն պատանիների հետազոտումը և բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են հետազոտման կամ բուժման,

2) բժշկական հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

8. Առաջարկել համայնքների ղեկավարներին, հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն զինվորական կոմիսարիատի կողմից զորակոչիկներին հավաքակայան ներկայացնելու գրաֆիկի և անհատական ծանուցագրերի, ապահովել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Գևորգյանին՝ զինվորական կոմիսարիատի սպասարկման տարածքում գտնվող ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին ներգրավել, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, զորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:

10. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ս.Մարտիրոսյանին՝ զորակոչային տեղամասերում ապահովել հասարակական կարգի պահպանությունը և կազմակերպել զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումներն ու նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամաս:

11. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի հրամանատար, ոստիկանության մայոր Ա.Պետրոսյանին՝ ապահովել զորակոչիկների անվտանգ փոխադրումը զորակոչային տեղամասերից հանրապետական հավաքակայան:

12. Սույն որոշման կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա.Գևորգյանի վրա:

13. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Հ.Հայրապետյանի վրա:

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 18
ք. Հրազդան